Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 30.12.2014թ. N15/15.11/22406-14 գրությանը կից Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի
հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2015-2016 թվականներին
իրականացվող ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և
մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում
առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

14.01.15թ.
№ 034/389-15



ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱՆ

20-1/4

Երևան-0010, Հանրապետության իր., Կառավարական տուն 2

“30” հունվար 2015թ.

N.07/15/253-15

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր՝ 19.01.2015թվականի 15/15.1/397-15 գրության «Բաց
հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ)
կողմից 2015-2016 թվականներին իրականացվող ծրագրի մասին» որոշման նախագիծը
բարեգործական որակելու վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան :

Հարգանքով՝

Ա. ԲԱԽՇՅԱՆ

30.01.15թ.
№ 025/2403-15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԴԵՎԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱԿԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

19.01.15թ.
№ 1111/263-15

20.1/4

Հարգելի պարոն Հարությունյան,

Ի կատարումն ՀՀ վարչապետի՝ 2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 15/15.11/22406-14 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2015-2016 թվականներին իրականացվող ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ չունի:


Jan 19 2015 1:27 PM

Հարգանքով՝

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՇԱՎԱՐՇ ՔՈԶԱՐՅԱՆ

Կատարող՝ Լուսինե Կարումյան

Իրավաբանական վարչություն (060) 620 422

19.01.15թ.
№ 019/980-15



20.1/4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0078, Երևան, Հալաբյան 41^ա, հեռ.380-382, էլ. փոստ arsen.mkrtchyan@justice.am

16.01.15թ. N 02/14/114-15
Ձեր N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան


Ի կատարումն ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 30-ի 15/15.11/22406-14 հանձնարարականի հայտնում ենք, որ «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2015-2016 թվականներին իրականացվող ծրագրի» դրույթներն անհրաժեշտ է խմբագրել և հստակեցնել, մասնավորապես՝ ծրագրի 7-րդ կետը վերաբերում է բարեգործություն ստացողներին, մինչդեռ հիշյալ կետում նշված են դրույթներ նաև ծրագրով նախատեսվող մի շարք միջոցառումների մասին, ինչպես նաև նախատեսված են չափանիշներ, որոնց հիման վրա պետք է կատարվի դրամաշնորհի ստացող կազմակերպությունների ընտրությունը: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նախատեսվող միջոցառումների նկարագրության վերաբերյալ դրույթներն անհրաժեշտ է նշել ծրագրի 9-րդ կետում:

Ելնելով վերոնշյալից ծրագրի դրույթներն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի

16.01.15թ.
№ 035/670-15

ունենալով ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական
ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



ԱՐՄԵՆ ՄԿՐՏՁՅԱՆ

Կատարող՝ Ալյա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ.՝ (010) 380-227



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

ՀՀ-1/4

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ minister@moh.am

13.01.15թ N ՇՀԲ/22.2/66-15

Ձեր N _____

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 15/15.11/22406-14 գրության
կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Բաց հասարակության
ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ)
կողմից 2015-2016 թվականներին իրականացվող ծրագրի մասին» որոշման
նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն
իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կատարող՝ Նաիրա Փափախյան
ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղորայքային քաղաքականության
և բժշկական տեխնոլոգիաների վարչություն
հեռախոս 52 27 21

13.01.15թ
№ 020/245-15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

20-1/4

«13» հունվար 2015 թ.

N 87/ՆԱԽԱՐԱՐ/24-15

Ձեր 30.12.2014 թ.
թիվ 15/15.11/22406-14

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2015-2016 թվականներին իրականացվող ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Տ. ԲԵՐԻԿՅԱՆ

Կատարող՝ Միջազգային համագործակցության և
զարգացման ծրագրերի վարչություն / 56 37 91

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ. (374 10) 56 53 83, ֆաքս (374 10) 52 08 30
<http://www.mlsa.am> info@mlsa.am

13. 01. 15թ
N 040/152-15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

DEPUTY MINISTER

11-2/4

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Տեղ./Tel.: 58 03 02, ֆաքս/ֆакс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

N 03/07-1/203-15 «16» հունվար 2015
ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի դեկտեմբերի 30-ի N15/15.11/22406-14 գրության՝

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2015-2016 թվականներին իրականացվող ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ, հայտնում եմ, որ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը չի առարկում ծրագիրը որպես բարեգործական որակելուն, սակայն առաջարկում է համատեղ քննարկել ծրագրում նշված ՀՀ կրթության և գիտության նախարարության և ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի հետ կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում նախատեսվող աջակցության, ՀՀ կրթության ոլորտում ՀՀ ԿԳ նախարարության համար նախատեսվող ռադիոնախարարությունների մանրամասները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ս.ՄԿՐՏՅԱՆ

կապ. Ն. Սահակյան
հեռ. 524777

16. 01. 15թ
N 031/718-15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ

0025, Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ.՝ 59 66 59, քարտուղարություն հեռ.՝ 59 61 25

№ 24/37
Ձեր

«15» 01 2015 թ.

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Միմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2015-2016 թվականներին իրականացվող ծրագրի մասին» որոշման նախագծի նախաբանում առաջարկվում է «եզրակացությունները և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն» բառերը փոխարինել «և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության 2015 թվականի հունվարի -ի N եզրակացությունները» բառերով:

Այլ առարկություններ և առաջարկություններ չկան:

ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ

Վ. ԳԱՄՊԱՆՅԱՆ

Բրադպարանական վարչություն
Գաղափարային և շեփական
ձև.՝ 59-64-01

65

816-994
19 01 15

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
«Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2015-2016 թվականներին իրականացվող ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության դիտողություն և առաջարկություն վերաբերյալ Կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2015-2016 թվականներին իրականացվող ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ ծրագրի 11-րդ կետում նշված կազմակերպական ծախսերը չեն համապատասխանում դրանց համարագրմանը (180,550 ԱՄՆ դոլար) և որոշ գործարքներ ներառված չեն ծրագրի 10-րդ կետում:	Ներկայացված ծրագիրը խմբագրվել է:
Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դիտողություն և առաջարկություն վերաբերյալ Հայտնում ենք, որ «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2015-2016 թվականներին իրականացվող ծրագրի» դրույթներն անհրաժեշտ է խմբագրել և հստակացնել, մասնավորապես՝ ծրագրի 7-րդ կետը վերաբերում է բարեգործություն ստացողներին, մինչդեռ հիշյալ կետում նշված են դրույթներ նաև ծրագրով նախատեսվող մի շարք միջոցառումների մասին, ինչպես նաև նախատեսված են չափանիշներ, որոնց հիման վրա պետք է կատարվի դրամաշնորհի ստացող կազմակերպությունների ընտրությունը: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նախատեսվող միջոցառումների նկարագրության վերաբերյալ դրույթներն անհրաժեշտ է նշել ծրագրի 9-րդ կետում:	Ներկայացված ծրագիրը մասամբ խմբագրվել է (ծրագրի 9-րդ կետի մասով): <i>20.1/4</i>

**Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության
առաջարկության վերաբերյալ**

Կազմակերպությունը 2015 թվականի հունվարի 22-ի գրությունը պատասխանել է ՀՀ կրթության և գիտության նախարարությանը:

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեփոխական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2015-2016 թվականներին իրականացվող ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ, հայտնում են, որ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը չի առարկում ծրագիրը որպես բարեփոխական դրակիր, սակայն առաջարկում է համառոտ թնալվել ծրագրում նշված ՀՀ կրթության և գիտության նախարարության և ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի հետ կնքված փոխընդունման հուշագրի շրջանակներում նախատեսվող աջակցության, ՀՀ կրթության ոլորտում ՀՀ ԿԳ նախարարության համար նախատեսվող ուսումնափորձությունների մակրամանները:

**Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության
դիտություն և առաջարկության վերաբերյալ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեփոխական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2015-2016 թվականներին իրականացվող ծրագրի մասին» որոշման նախագծի նախարարում առաջարկվում է «Եզրակացությունները և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն» բաժնի փոխարինել «և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության 2015 թվականի հունվարի -ի N եզրակացությունները» բաժնի:

Որոշման նախագիծը խնդրվում է:

ՁԲ-1/4



Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան
 Թումանյան փողոց 2-րդ փակ. տուն 7/1, երևան, 375002 Հայաստան • Հեռ/Ֆաքս (374-10) 533862, 536758
 • E-mail: info@osi.am • www.osi.am •

**Գործադիր տնօրեն
Լարիսա Մինասյան**

22 հունվարի 2015թ.

Պրն. Մ. Մկրտչյանին
ՀՀ Կրթության և գիտության
Նախարարի տեղակալ

Տնօրենների խորհուրդ

Արմեն Փիրուզյան
Նախագահ

Ղավիթ Բաբկյան
Նարինե Գապարյան
Ինգա Զարաֆյան
Աննա Իսրայելյան
Սեյրան Սարտիրոսյան

Պատճեն՝ պրն. Ս. Տեր-Մինոսյանին
ՀՀ կառավարության բարեփոխական ծրագրերը
համակարգող հանձնաժողովի
նախագահ

Հարգելի պ-ն Մկրտչյան,

Շնորհակալություն «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ)-ի կողմից 2015-2016 թվականներին իրականացվող ծրագիրը» որպես բարեփոխական որակելու վերաբերյալ առարկություն չունենալուն: Մենք լիովին համաձայն ենք Ձեր՝ 2015թ. հունվարի 16-ի թիվ 03/07-1/2 03-15 գրության մեջ նշված առաջարկության հետ, այն է՝ համատեղ քննարկել ներկայացված ծրագրում նշված ՀՀ կրթության և գիտության նախարարության և ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի հետ կնքված փոխընդունման հուշագրի շրջանակներում նախատեսվող համագործակցության մանրամասները: Լինելով ՀՀ Կրթության և գիտության նախարարին կից կոլեգիայի անդամ մենք մշտական կապի մեջ ենք ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ և պատրաստակամ ենք համատեղ աշխատելու: Նաև օգտագործելով այս հանգամանքը, մեկ անգամ ես կքննարկեմ ԿԳՆ-ի և ԿՄԻ-ի հետ փոխընդունման հուշագրով նախատեսված համագործակցության շրջանակները:

Հարգանքներով,



Լարիսա Մինասյան
Գործադիր տնօրեն

ՁԲ-1/4

128

094-1784
26 01 15



Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի
հայկական մասնաճյուղ

Թումանյան փողոց 2-րդ փակ. տուն 7/1, Երևան, 0002 Հայաստան • Գեմ/Ֆաքս (374-10) 533862, 536758
• E-mail: info@osi.am • www.osi.am •

Գործադիր տնօրեն
Լարիսա Սինասյան

29 հունվարի 2015թ.

ՏՊ-1/4

ՀՀ կառավարության
բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի
նախագահ
պ.-ն. Ս. Տեր-Մինոյանին

Տնօրենների կոորդինատոր

Արմեն Փիրուզյան
Նախագահ

Հարգելի պարոն Տեր-Մինոյան,

Ղափիթ Բաբիկյան
Նարինե Գասպարյան
Ինգա Զարաֆյան
Աննա Իսրաելյան
Սեյրան Մարտիրոսյան


Ձեզ ենք ներկայացնում «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ)-ի կողմից 2015-2016 թվականներին իրականացվող ծրագիրը»՝ նոր խմբագրությամբ, որտեղ հաշվի են առնվել ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ արդարադատության նախարարության կողմից արված առաջարկները:

Հարգանքներով՝



Լարիսա Սինասյան
Գործադիր տնօրեն

175



ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

հունվարի 2015 թվականի N Մ - - Ա
քաղ. Երևան

ՏՊ-1/5.1

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՅՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ
ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հունվարի -ի N 07/80-2/-15 և հունվարի -ի N 06/5-1/-15 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2015 թվականի հունվարի -ի N -15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից ձեռք բերված հիմնադրամի պատկերանիշներով մարզահագուստի կոմպլեկտների (100 տեղ, 5,000 հատ, 4,022 կգ ընդհանուր քաշով, 42,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,900 ԱՄՆ-ի դոլար և 858,600 դրամ, «Արարտյան» տարածաշրջնային մաքսատուն) ներմուծման և բաշխման ծրագիրը: Բեռը անհատույց բաշխվելու է Հայաստանի Հանրապետության մարզադպրոցների միջև (բաշխման ցանկը կցվում է):

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ, ՎԱՅՈՑ ՁՈՐԻ, ՍՅՈՒՆԻՔԻ և ՏԱՎՈՒՇԻ մարզերում

ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐ ՀԱՃԱԽՈՂ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ

ՄԱՐԶԱՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ

ՑԱՆԿ

Ձ - 1/5.1

Մարզի անվանումը	Մարզիկների թիվը	6-7 տ.	8-9 տ.	10-11 տ.	12-13 տ.	14-15 տ.	16-17 տ.
Վայոց Ձոր	908	64	92	179	204	209	160
Գեղարքունիք	1802	54	132	374	504	370	368
Սյունիք	1500	51	137	245	346	352	364
Տավուշ	717	0	127	160	175	155	100
Մասնավորապես՝	4927	169	488	958	1229	1086	992
Հայաստան Համահայկական հիմնադրամ	73						
Ընդամենը առանձին	5000						



ՀՀ Գրագրության և Արտաքին կապերի բաժին
Հունվար, 2015թ.

Բաշխումը նախատեսվում է փետրվար ամսին



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ ՈՐ Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

Ձ - 1/5.1

0010, Երևան, Մեփր-Մոյսյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

30.01.15 № 04/80-2/

Ձեր № 1568-15

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 26.01.2015թ. N 15/15.1/846-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

(Signature)

Ատոմ Զանջուղազյան

Կատարող՝ Ս. Ավագյան
Հեռ. 011 910-549

04.01.2015 - 15

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

հունվարի 2015 թվականի N Մ-
քաղ. երևան

-Ա

Մ-1/5.2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԱԿԱՂԵՄԻԿՈՍ Ս. ԱՎԴԱԼԵԿՅԱՆԻ
ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N1)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հունվարի -ի N և հունվարի -ի N ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի հունվարի -ի N եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել Հնդկաստանի Հանրապետության կառավարության կողմից աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակաղեմիկոս Ս. Ավդալեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռների (տպիչներ՝ 3 տեղ, 258 կգ ընդհանուր քաշով, 527,945 հնդկական ռուպիին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը «Զվարթնոց» ՄՏ, սկաներներ՝ 2 տեղ, 269 կգ ընդհանուր քաշով, 1,925,000 հնդկական ռուպիին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 162,051.56 հնդկական ռուպի, «Զվարթնոց» ՄՏ և թժշկական սարքեր, սարքավորումներ, գործիքներ՝ 23 տեղ, 154 կգ ընդհանուր քաշով, 2,722,500 հնդկական ռուպիին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 38,363 հնդկական ռուպի, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակաղեմիկոս Ս. Ավդալեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության էլիտմիկայի նախարարություն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱԴԱՐԱՆ

Մ-1/5.2

0010, Երևան, Մեյք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

26. 01. 15թ. № 07/80-2/1191-15

Ձեռք №

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 22.01.2015թ. N 15/15.11/707-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակաղեմիկոս Ս. Ավդալեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռների ներմուծման ծրագրի մասին (N1)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ա.Ե.Ե.

Ատոմ Զանջուղազյան

Կատարող՝ Ս. Ավագյան
Հեռ. 011 910-549

26. 01. 15թ.

№ 034/1907-15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Տ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Վ Ա Ն

Երևան-010, Մելիք-Աղամյան 1.

27. 01. 15թ
№ 06/5-1/1802-15

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 22.01.2015թ. N 15/15.11/707-15 գրությամբ ներկայացված Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի «Ակադեմիկոս Ս. Ավդաբեկյանի անվան առողջապահության
ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված
բեռների ներմուծման ծրագրի մասին» (N1) որոշման նախագծի վերաբերյալ
հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների
շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով

Վ. Սիմոնյան

Կառավարող՝ ԳԱՀՄ քաժին
Հեռ. 060.700.142

27. 01. 15թ
№ 034/2060-15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Տ Ա Ր Ա Ր

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ minister@moh.am

23.01.15թ. Նիսի/22.2/509-15

Ձեր N _____

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 2015 թվականի հունվարի 22-ի թիվ 15/15.11/707-15 գրության
կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործա-
կան ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Ս. Ավդաբեկյանի անվան
առողջապահության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության
հասցեով ստացված բեռների ներմուծման ծրագրի մասին» (N1) որոշման նախագծի
վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր
իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կատարող՝ Նաիրա Փախիսյան
ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղորայքային քաղաքականության
և բժշկական տեխնոլոգիաների վարչություն
հեռախոս 52 27 21

23.01.15թ.
№ 020/1404-15

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱՎԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՆԱԽԱԳԻԾ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
հունվարի 2015 թվականի N Մ - - Ա
քաղ. երևան

20.1/5.3

**«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱ-
ԴՐԱՄ»-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հունվարի -ի N 07/80-2/-15 և հունվարի -ի N 06/5-1/-15 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2 015 թվականի հունվարի -ի N ՖԲ/ԱՆԱ-4/-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է .**

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի հասցեով ստացված չոր ապրիլի (20 տեղ, 15422 կգ ընդհանուր քաշով, 111,360 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 9510 ԱՄՆ-ի դոլար, բեռի բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը:

2. «Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարու-թյուն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Արմավիրի և Տավուշի մարզպետներին:

**«Գ. Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» անունով ուղարկված 20 պալետ,
 15 422 կգ բրուտտո քաշով, 111 360 ԱՄՆ դոլար արժողությամբ,
 ծամապարհածախքը՝ 9 510 ԱՄՆ դոլար արժողությամբ բեռի
 ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿԸ**

h/h	Ապրանքի անվանումը	Տեղ	Քաշ բրուտտո կգ	Արժեք \$	Խաղողի հատուկ դրոշմող ՊՕԱԿ	Հալ առաջնական երկրորդ Երրորդ թեմ	«Տիրամայր Դայաստան»-ի կուսարամ»	Ապիտակի երիտասարդության և կանանց կենտրոն ԲԿ	Փոխություն ԴԵՆԿ ԲԿԿ	22 Արմավիրի մարզի Ենիկի գյուղատեղ. տարած. 255 ընտանիք	ԼԳ Բաշաթաղի շրջ. սոցալ վարչություն	ԼԴ «Կրիեն» մայր և մորամիջ կենտրոն ԲԿ	Տավուշի մ. մարզի արամի կրթության նշանակի և սպորտի վարչություն
1.	Համակցված մուկ/չոր ապրուր/ Vitameal	20 պալետ	15 422	111 360 ձախապարհածախք \$9 510	539.85 \$3897.6	1079.7 \$ 7795.2	539.85 \$ 3897.6	1079.7 \$ 7795.2	215.88 \$ 1559.04	1079.7 \$ 7795.2	3855.5 \$ 27840	5952.12 \$ 42984.96	1079.7 \$ 7795.2

20.1/5.3



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱԴԱՐԱՆ

ՁԲ-1/5.3

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

29.01.15 № 04/80-21

Ձեր №

1334-15

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան


Ի պատասխան Ձեր 23.01.2015թ. N 15/15.1/722-15 գրության՝ կապված ՀՀ
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Գուրգեն
Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի հասցեով ստացված բեռի
ներմուծման և բաշխման ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, առաջարկում ենք
ներկայացված որոշման նախագծի 3-րդ կետում ներառել նաև ՀՀ Արմավիրի և Տավուշի
մարզպետարաններին:

Հարգանքով

Արամ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան
Հեռ. 011 910-549

064/2147-15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Երևան-010, Մելիք-Աղամյան 1.

06/5-1/1317-15
27.01.15
ՁԲ-1/5.3

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 23.01.2015թ. N 15/15.1/722-15 գրությամբ ներկայացված Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի «Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի
հասցեով ստացված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին» որոշման
նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված
իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով

Վ. Միրումյան

Կատարող՝ ԳՄՀՄ բաժին
Հեռ. 011.800.329

064/2089-15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

« 24 » 01 2015 թ.

Ձեր 2015-01-23, 15/15.1/722-15

Ձ. 1/5.3
N 8K/69.6P-4/
443-15

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով «Գուրգեն Մելիքյանի բազմազգական ընտանիքների հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Տ. ԲԵՐԻԿՅԱՆ

Կատարող՝ Միջազգային համագործակցության և
զարգացման ծրագրերի վարչություն 581-680

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30
<http://www.mlsa.am> info@mlsa.am

040/1995-15

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Գուրգեն Մելիքյանի բազմազգական ընտանիքների հիմնադրամ»-ի հասցեով ստացված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին»
որոշման նախագծի վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
ՀՀ ֆինանսների նախարարություն - 29.01.15, N 07/80-2/1334-15	
Առաջարկում ենք ներկայացված որոշման նախագծի 3-րդ կետում ներառել նաև ՀՀ Արմավիրի և Տավուշի մարզպետարաններին	Առաջարկությունը հաշվի է առնվել: Կցված է նախագծի լրացված տարբերակը

Ձ. 1/5.3

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՆԱԽԱԳԻԾ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
հունվարի 2015 թվականի N Մ - - Ա
քաղ. երևան

ժ 1/5. 4

**«ԹՈՒՖԵՆԿՅԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հունվարի -ի N 07/80-2/-15 և հունվարի -ի N 06/5-1/-15 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2 015 թվականի հունվարի -ի N ՖԲ/ԱՆՄ-4/-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից «Թուֆենկյան Բիբետան Քարիերս» հիմնադրամի կողմից «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված օգտագործված հագուստի (17 տեղ, 965 կգ ընդհանուր քաշով, 965 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 800 ԱՄՆ-ի դոլար, բեռի բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման և բաշխման ծրագիրը:

2. «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամիին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

Ց ՈՒ Ց Ա Վ

ժ 1/5. 4

ԱՆՈՒՆ/ԱԶԳԱՆՈՒՆ	ԱՆՁՆԱԳՐԻ ՍԵՐԱ
1.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ	AN0609033
2.ՊԱՊԱՅ ՄԱՐԻՆԱ	AH829345
3.ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ	AN0334425
4.ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆԱԶԻՏ	AG0244580
5.ԲԱՂՂԱՍԱՐԳՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ	AK0343223
6.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԶՈՒԼԻԲԵՏԱ	AF0253968
7.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ	AF0510785
8.ԲԵՆՅԱՄԻՆՈՎԱ ԺԱՆՆԱ	AN0382505
9.ԱՌԱՔԵԼՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ	AM0557406
10.ՇԻՐԻՆՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ	AF0258949
11.ՊԵՏՐՈՍՅԱՆ ԴԻԱՆԱ	AK0379387
12.ՍՈՒՐԱԴՅԱՆ ԱՆԺԵԼԱ	AH0272042
13.ԲԵԼԼՈՒՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ	AK0487080
14.ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ	AN0259809
15.ՂԱՀՐԱՍՆՅԱՆ ԱՆԱԶԻՏ	AK0633315
16.ԵՐԵՍՅԱՆ ՍՐԲՈՒՀԻ	AM0325963
17.ԴԱՎԹՅԱՆ ՆԱՐԻՆԵ	AE0428381
18.ՎԱՐԴԱՆՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ	AK0280348

20.1/5.4

19.ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ	AC0611290
20.ՀԱԿՈԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ	AF0550481
21.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԻՆԵ	AK0621567
22. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԼԱՐԻՍԱ	AG0660933
23.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԱԻՐԱ	AN0510829
24.ԴԵՄԻՐՉՅԱՆ ԼԻԱ	AK0515310
25.ՎԼԱՍՈՎԱ ԼՅՈՒՑԻԱ	53 0310836
26.ՀԱԿՈԲՅԱՆ ԴԻԱՆԱ	AG0320034
27.ԱՆՏՈՆՅԱՆ ՆԱՐԻՆԵ	AK0582055
28.ՄԱՀԱԿՅԱՆ ԼԻԱՆԱ	AH0481507
29.ՍԻՐԵԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ	AG0274544
30.ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՐԱՆՈՒԶԻ	AN0287849
31.ԶԵԻՄԲԻՆՍԿԱ ՍԻԼՎԻԱ	EA5344086
32.ՆԱԶԱՐՅԱՆ ՎԱՆԵ	AA005703
33.ԺԱՄՂԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ	AF0716278
34.ՍԻՐԶՈՅԱՆ ԱՐՄԻՆԵ	AH0614805
35.ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈԶԱ	AE0522811
36.ՄԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՀԱՆՈՒՇ	AG0455897



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Ն Ա Վ ՈՐ Գ Ա Ն Զ Ա Դ Ե Տ

20.1/5.4

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

29.01.15 № 07/80-21
Ձեռն № 1335-15

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 23.01.2015թ. N 15/15.1/745-15 գրության՝ կապված ՀՀ
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
««Բժուճենկյան» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման և
բաշխման ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում եմք, որ մեր
իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Աստուծոյ Զանգուղայան

Կատարող՝ Ս. Ավագյան
Հեռ. 011 910-549

034/2077-15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Հ-1/5.4

Երևան-010, Մելիք-Աղամյան 1.

06/5-1/1326-15
27.01.15

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 23.01.2015թ. N 15/15.1/745-15 գրությամբ ներկայացված Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված
բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ
հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների
շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով

Վ. Միմոնյան

Կատարող՝ ԳՄՀՄ բաժին
Հեռ. 011.800.329

034/2114-15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱՆ

Հ-1/5.4

«24» 01 2015 թ.

N 37/1690-4/
441-15

Ձեր 2015-01-23, 15/15.1/745-15

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով ««Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամի հասցեով
ստացված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին» Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը
վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ֆ. ԲԵՐԻԿՅԱՆ

Կատարող՝ Միջազգային համագործակցության և
զարգացման ծրագրերի վարչություն 581-680

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30
<http://www.mlsa.am> info@mlsa.am

040/1998-15

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**հունվարի 2015 թվականի N Մ - - Ա
քաղ. երևան**

Մ. 1/5.5

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՇՄԱՆԴԱՄԼԵՐԻ «ՓՅՈՒՆԻԿ» ՄԻՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հունվարի -ի N 07/80-2/-15 և հունվարի -ի N 06/5-1/-15 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի հարցերի նախարարության 2015 թվականի հունվարի -ի N ՖԲ/ԱՆՄ-4/-15 եզրակացությունները, **ո թ ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Ֆրանսիայից «Աղավնի» ասոցիացիայի կողմից «Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված օգտագործված հագուստի (7 տեղ, 137 կգ քաշով, 300 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 710 եվրո, ցանկը կցվում է, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծման և բաշխման ծրագիրը: Բեռը բաշխվելու է կազմակերպության շահառուների միջև:

2. «Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

Մ. 1/5.5

0010, Երևան, Մեյիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

30.01.15 N° 04/80-2/
Ձեր N° 1565-15

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 27.01.2015թ. N 15/15.1/900-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Փյունիկ» միություն» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանջուղազյան

Կատարող՝ Ս. Արվազյան
Հեռ. 011 910-549

034/2415-15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

«29» 01 2015 թ.

Ձեր 2015-01-27, 15/15.1/900-15

№ 82/688-4/
524-15

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով ««Փյունիկ» Հայաստանի հաշմանդամների միություն» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ֆ. ԲԵՐԻԿՅԱՆ

Կատարող՝ Միջազգային համագործակցության և
գարգացման ծրագրերի վարչություն 581-680

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30
<http://www.mlsa.am> info@mlsa.am

արժ 2319-15

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2015 թվականի N Մ-

քաղ. Երևան

-Ա

արժ 1/5.6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-
ՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(«ՀՀ-ում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և
դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային
ծրագիր)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2015 թվականի հունվարի 20-ի N 07/80-2/594-15 և հունվարի 20-ի
N 06/5-1/626-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության
2015 թվականի հունվարի 26-ի N ԱՄ/22.2/591-15 եզրակացությունները, որոշում է:

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարու-
թյան և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի
միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետու-
թյան առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետա-
կան կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռները
(ոննտգեն սարք-հավաքածու (լաբորատոր ծախսանյութեր՝ 2 տեղ, 30.5 կգ ընդհանուր
քաշով, 10,363.53 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման
ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ և ներարկիչներ, օգտագործված ներարկիչների ու ասեղների
համար տուփեր՝ 25 տեղ, 290.47 կգ ընդհանուր քաշով, 4,229.97 ԱՄՆ-ի դոլարին համար-
ժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում են
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում
տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի
կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (2014
թվականի դեկտեմբերի 26-ի N Մ-11339-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի
շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱԴԱՐԱՆ

Ձ-1/5.6

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

20.01.15թ. № 07/80-2/594-15

Ձեր № _____

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 15.01.2015թ. N 15/15.4/232-15 գրության՝ կապված ՀՀ
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի
շրջանակներում ներմուծվող բեռի մասին («Հայաստանի Հանրապետությունում
տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի
կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր)» որոշման նախագծի հետ, հայտնում
ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ
չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանցուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան
Հեռ. 011 910-549

N 034/1172-15
20.01.15թ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Ձ-1/5.6

Երևան-0015, Մ. Խորենացու 3, 7

N 06/5-1/626-15
20.01.15թ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 15.01.2015թ. N 15/15.6/232-15 գրությամբ ներկայացված Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի
N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռների
մասին («Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային
ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում»
որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին
վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով

Վ. Միրումյան

Կատարող՝ ԳԱՀԻՄ Բաժին
Հեռ. 060.700.142

N 034/1212-15
20.01.15թ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ minister@moh.am

26.01.15, N 248/22.2/591-15

Ձեր N _____

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 2015 թվականի հունվարի 23-ի թիվ 15/15.4/232-15 գրության կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռների մասին («Հայաստանի Հանրապետությունում տուրքերկույլոգի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուրքերկույլոգի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր) որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

N 020/1918-15
26.01.15

Ն Ա Ն Ա Գ Ի Ծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Մ Ա Մ

2015 թվականի N Մ-

քաղ. երևան

-Ա

26.01.15.7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԾՐԱ-
ՆԱԿԱՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ

(«ՀՀ-ում տուրքերկույլոգի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուրքերկույլոգի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր)(1)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հունվարի 26-ի N 07/80-2/1108-15 և հունվարի 23-ի N 06/18-4/930-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի հունվարի 23-ի N ԱՄ/22.2/439-15 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուրքերկույլոգի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռը (դեղեր՝ 1 տեղ, 202 կգ ընդհանուր քաշով, 5,222.67 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուրքերկույլոգի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուրքերկույլոգի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (2014 թվականի դեկտեմբերի 26-ի N Մ-11339-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱԴԱՐԱՆ

ՁԻ-Լ/Տ.Դ

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

26.01.15թ. № 034/1787-15

Ձեր №

«Հայաստանի կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 19.01.2015թ. N 15/15.4/479-15 գրության՝ կապված «Հայաստանի կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին («Հայաստանի Հանրապետությունում տուրերկույլոգի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուրերկույլոգի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանգուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան
Հեռ. 011 910-549

№ 034/1787-15
26.01.15թ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 11) 800 077

№ 06/18-4/930-15
23.01.15թ

ՁԻ-Լ/Տ.Դ

«Հայաստանի կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 19.01.2015թ. № 15/15.4/479-15 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին («Հայաստանի Հանրապետությունում տուրերկույլոգի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուրերկույլոգի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Սիմոնյան

Ս. Ավետիսյան, ԳՄՀՄ բաժին,
հեռ. 011 800 741

№ 034/1580-15
23.01.15թ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ minister@moh.am

23.01.15 N 240/22.2/439-15

Ձեռք N _____

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 2015 թվականի հունվարի 19-ի թիվ 15/15.4/479-15 գրության կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին («Հայաստանի Հանրապետությունում տուրբերկույողի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուրբերկույողի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր) որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

1020/1585-15
23.01.15թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2015 թվականի N Մ-
քաղ. երևան

-Ա

23.01.15.8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԾՐԱ-
ՆԱԿԱՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ

(«ՀՀ-ում տուրբերկույողի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և
դեղակայուն տուրբերկույողի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային
ծրագիր) (2)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության 2015 թվականի հունվարի 26-ի N 07/80-2/1170-15 և
հունվարի 26-ի N 06/5-1/1071-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նա-
խարարության 2015 թվականի հունվարի 22-ի N ԱՄ/22.2/427-15 եզրակացությունները,
որոշում է.

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարու-
թյան և ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի, տուրբերկույողի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի
միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետու-
թյան առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետա-
կան կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռը
(դեղեր՝ 2 տեղ, 410 կգ ընդհանուր քաշով, 18,857.1 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ
արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-
ժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուրբերկույողի
դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուրբերկույողի կառավարման
ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (2014 թվականի
դեկտեմբերի 26-ի N Մ-11339-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակ-
ներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱԴՐԵՍ

№ 1/5.8

0010, Երևան, Մելիք-Արամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

26.01.15թ. № 04/202/1470-15

Ձեր № _____

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 20.01.2015թ. N 15/15.4/558-15 գրության՝ կապված ՀՀ
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի
շրջանակներում ներմուծվող բեռի մասին («Հայաստանի Հանրապետությունում
տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի
կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր) (2)» որոշման նախագծի հետ,
հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և
առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ասոմ Զանցուղազյան

Կատարող՝ Ս. Ավագյան
Հեռ. 011 910-549

N 034/1914-15
26.01.15թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Երևան-010, Մելիք-Արամյան 1.

N 06/5-1/1071-15

26.01.15թ. № 1/5.8

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 20.01.2015թ. N 15/15.4/558-15 գրությամբ ներկայացված Հայաստանի
